ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ **ՎԻՎ/144/2024**

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «04» հուլիսի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի, Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով Հանձնաժողովի Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից «Հետք Մեդիա Գործարան» լրատվամիջոցի՝ «Տեղի գնումները՝ համայնքի ղեկավարի կնոջից, քեռուց ու քեռակնոջից» վերտառությամբ[1] և «Տեղի համայնքապետը 378 մլն դրամի պայմանագրեր է կնքել եղբոր ԱՁ-ի հետ» վերտառությամբ[2] հրապարակումներում ներկայացված տեղեկատվությամբ ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար Դավիթ Արամայիսի Ղուլունցի վերաբերյալ վեր հանված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման հիմք հանդիսացած նյութերը, պարզել է. Դավիթ Արամայիսի Ղուլունցի հետ փոխկապակցված անձ Մարտունիկ Պողոսյանի բաժնեմասնակցությամբ «ԶԱՆԳԵԶՈՒՐ ԳԱԶ» ՍՊԸ-ի հետ իրականացված գնման գործընթացի արդյունքում 2024 թվականի հունվարի 31-ին թիվ ՍՄՏՀ-ԳՀ-ԱՊՁԲ-24/2 պայմանագրի, և Դավիթ Արամայիսի Ղուլունցի հետ փոխկապակցված անձ «Սասուն Ղուլունց» ԱՁ-ի հետ իրականացված գնման գործընթացի արդյունքում 2023 թվականի դեկտեմբերի 7-ին թիվ ՍՄՏՀ-ԳՀ-ԱՇՁԲ-23/11, 2024 թվականի հունվարի 31-ին թիվ ՍՄՏՀ-ԲՀ-

[1] https://mediafactory.am/our-products/tegh
[2] http://surl.li/umjyn

ԱՇՁԲ-24/01, ինչպես նաև 2024 թվականի փետրվարի 23-ին թիվ ՍՄՏՀ-ԳՀ-ԱՇՁԲ-24/02-2 պայմանագրերի կնքմամբ Դավիթ Արամայիսի Ղուլունցն իր լիազորությունների շրջանակում կատարել է գործողություն (անգործություն), որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ այդ մասին «Հանրային ծառայության» մասին օրենքով սահմանված կարգով 10-օրյա ժամկետում գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով, այդ կերպ թույլ տալով «Հանրային ծառայության» մասին օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի առերևույթ խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով, «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 9-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար Դավիթ Արամայիսի Ղուլունցի նկատմամբ հարուցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթ:
2. Սահմանված կարգով ապահովել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմումը:
3. Սույն որոշումը եռօրյա ժամկետում հրապարակել Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ**

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ